Կարգապահական գործ թիվ ԿԳ-16184

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 254-րդ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/171-Ա
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԹՈՒՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյանի, **Խորհրդի անդամներ՝** Նելլի Հարությունյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Կարեն Մեժլումյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արթուր Համբարձումյանին (արտոնագիր թիվ 931) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Տ

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (այսուհետ՝ Դպրոց) կողմից 01.08.2016թ-ին ներկայացված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Արթուր Համբարձումյանը (արտոնագիր թիվ 931) 2016թ-ի առաջին կիսամյակի (հունվարից հունիս (ներառյալ)) ընթացքում չի մասնակցել պարտադիր վերապատրաստման դասընթացներին և չի լրացրել պարտադիր վերապատրաստման որևէ ժամ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի 08.08.2016թ-ի թիվ 347-Ա/ԿԳ-16184 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Արթուր Համբարձումյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագիրք**) 2.8.2 կետի խախտման հատկանիշներով:

08.08.2016թ-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի նոյեմբերի 21-ին, ժամը՝18:46-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Փաստաբան Արթուր Համբարձումյանը 16.08.2016թ. գրավոր դիմումով պարտավորվել է հաշվետու կիսամյակում չանցած վերապատրաստման դասընթացների ժամերն իր հաշվին անցնել հաջորդ կիսամյակում և խնդրել է կարգապահական գործի վարույթը կարճել:

4. <u>Գործի հանգամանքները՝առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդը՝ ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) 2016թ. առաջին կիսամյակի (հունվար-հունիս (ներառյալ)) ընթացքում Պալատի, Դպրոցի և Պալատի կողմից սահմանված կարգով հավատարմագրված կազմակերպությունների կողմից կազմակերպվել է 102 (մեկ հարյուր երկու) վերապատրաստման դասընթաց:

Նշված փաստը հաստատվում է Պալատի աշխատակազմի ղեկավարի և վերապատրաստման հարցերով համակարգողի 10.10.2016թ. տեղեկանքով:

2) Փաստաբան Արթուր Համբարձումյանը 2016թ. հունվար-հունիս (ներառյալ) ամիսներին չի մասնակցել պարտադիր վերապատրաստման դասընթացներին և չի լրացրել պարտադիր վերապատրաստման որևէ ժամ:

Նշված փաստը հաստատվում է Դպրոցի 01.08.2016թ. տեղեկանքով, Պատասխանողի դիմումով:

3) Փաստաբան Արթուր Համբարձումյանի նկատմամբ սահմանված կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով կարգապահական վարույթ հարուցվել է առաջին անգամ:

Նշված փաստը հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 10.10.2016թ. տրամադրված N ԸԴՂ/ԿԳ/908 -16 տեղեկանքով:

4) Փաստաբան Արթուր Համբարձումյանը պարտավորվել է հաշվետու կիսամյակում չանցած վերապատրաստման դասընթացների ժամերն իր հաշվին անցնել հաջորդ կիսամյակում:

Նշված փաստը հաստատվում է փաստաբան Արթուր Համբարձումյանի 16.08.2016*թ. դիմումով:*

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 10.10.2016թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Արթուր Համբարձումյանի (արտոնագիր 931, ստացել՝ 28.10.2009թ.) նկատմամբ 2009-2016թթ. ընկած ժամանակահատվածում վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված Պալատի նախագահի առաջին տեղակալի 08.08.2016թ. թիվ 347-Ա/ԿԳ-16184 որոշմամբ հարուցված կարգապահական գործի):

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արթուր Համբարձումյանի նկատմամբ կարգապահական գործի վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Փաստաբանների վերապատրաստման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի և Պալատի խորհրդի 18.12.2014թ. թիվ 35/8-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստման» կարգի (**այսուհետ՝ Կարգ**) դրույթներով:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ... 4.1) սահմանված կարգով և ժամաքանակով մասնակցել սույն օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին:*

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է անցնել փաստաբանների պալատի խորհրդի սահմանած կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներ, որոնք չեն կարող երկու տարվա ընթացքում քառասունութ ժամից պակաս լինել:*

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.5 կետի 24-րդ ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը, որպես գործադիր մարմին հաստատում է փաստաբանների վերապատրաստման կարգը*:

Կանոնագրքի 2.8.2 ենթակետը սահմանում է, որ *փաստաբանը պարտավոր է Պալատի խորհրդի կողմից սահմանված կարգով և ժամաքանակով մասնակցել Օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին:*

Կարգի 1-ին կետի համաձայն՝ *կարգը սահմանում է փաստաբանների վերապատրաստման դասընթացներ անցնելու ընթացակարգը, ժամկետները, ժամերի հաշվարկը, պատասխանատվության, հաշվետվողականության, ինչպես նաև վերապատրաստման հետ կապված այլ հարաբերությունները*:

Կարգի 8-րդ կետի համաձայն՝ *յուրաքանչյուր կիսամյակի (վեց ամսվա) համար փաստաբանը՝ Կարգով նախատեսված ժամկետում և ընթացակարգով, պետք է անցնի 12 (տասներկու) ակադեմիական ժամ (այսուհետ՝ ժամ, 1 (մեկ) ակադեմիական ժամը հավասար է 40 (քառասուն) րոպեի) վերապատրաստում: Կիսամյակի հաշվարկը՝ ա) սկսվում է հունվար ամսից և ավարտվում հունիսին (ներառյալ), կամ բ) սկսվում է հուլիս ամսից և ավարտվում դեկտեմբերին (ներառյալ):*

Կարգի 27-րդ կետի համաձայն՝ *կարգը խախտելու համար փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանված կարգով:*

Պալատի խորհրդի՝ «ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 18.12.2014թ. թիվ 35/8-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստման» կարգում լրացումներ կատարելու հարցը քննարկելու մասին» 29.10.2015թ. թիվ 28/8-Լ որոշմամբ (**այսուհետ՝ Որոշում**)՝ Կարգը լրացվել է 30.[1] կետով, համաձայն որի՝ *եթե փաստաբանը գրավոր դիմում (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով) է ներկայացնում Պալատին՝ պարտավորվելով հաշվետու կիսամյակում չանցած վերապատրաստման դասընթացների ժամերն իր հաշվին անցնել հաջորդ կիսամյակում, ապա՝ (...) վերապատրաստման դասընթաց չանցնելու հիմքով փաստաբանի նկատմամբ առաջին անգամ հարուցված կարգապահական վարույթը կարճվում է:*

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ փաստաբանը պարտավոր է անցնել վերապատրաստման դասընթացներ, որոնք չեն կարող երկու տարվա ընթացքում քառասունութ ժամից պակաս լինել, իսկ Պալատի խորհուրդը, որպես գործադիր մարմին, սահմանում է փաստաբանների վերապատրաստման կարգը և

ժամաքանակը: Սահմանված ժամկետում վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու համար փաստաբանը ենթակա է պատասխանատվության, բացառությամբ Կարգի 30.[1] և 30.[3] կետերով սահմանված դեպքերի, որոնց կիրառման համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների պարտադիր առկայությունը՝

✓ վերապատրաստման դասընթաց չանցնելու հիմքով փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը պետք է հարուցված լինի առաջին անգամ,

✓ վերապատրաստման դասընթաց չանցնելու հիմքով փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը պետք է հարուցված լինի 2015 թվականի հունվարի 1-ից հետո,

✓ կարգով սահմանված արտոնությունից փաստաբանը կարող է օգտվել միայն մեկ անգամ,

✓ փաստաբանը պետք է գրավոր դիմում (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով) ներկայացնի Պալատին՝ պարտավորվելով հաշվետու կիսամյակում չանցած վերապատրաստման դասընթացների ժամերն իր հաշվին անցնել հաջորդ կիսամյակում:

Փաստաբան Արթուր Համբարձումյանի նկատմամբ սույն կարգապահական վարույթը հարուցվել է այն հիմքով, որ վերջինս՝ խախտելով Կարգի վերոնշյալ կանոնը, 2016թ. առաջին կիսամյակի (հունվարից հունիս (ներառյալ)) ընթացքում չի մասնակցել պարտադիր վերապատրաստման դասընթացներին:

5) Պալատի խորհուրդն արձանագրում է, որ 2016 թվականի հունվար-հունիս (ներառյալ) ամիսներին Պալատը կազմակերպել է 102 (մեկ հարյուր երկու) վերապատրաստման դասընթաց (չհաշված առցանց վերապատրաստման դասընթացները), որոնք վարել են 45 դասավանդող: Ընդ որում, թեմաները նախապես հաստատված և տեղադրված են եղել Պալատի կայքում, ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա դասացուցակները հաստատվել և տեղադրված են եղել Պալատի կայքում:

Նման պայմաններում Պալատի խորհուրդն արձանագրում է, որ փաստաբան Արթուր Համբարձումյանն օբյեկտիվորեն ունեցել է հնարավորություն հաշվետու ժամանակահատվածում անցնելու տվյալ կիսամյակի համար պարտադիր 12 (տասներկու) ակադեմիական ժամ ժամաքանակով վերապատրաստման դասընթացները, սակայն չի կատարել օրենքով նախատեսված պարտականությունը:

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 10.10.2016թ. տրամադրված տեղեկանքից բխում է, որ Կարգի վերոնշյալ լրացումը կատարելուց հետո փաստաբան Արթուր Համբարձումյանի նկատմամբ վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով կարգապահական վարույթ հարուցվել է առաջին անգամ:

Կարգում վերոնշյալ լրացումը կատարելուց հետո, **փաստաբան Արթուր Համբարձումյանը 16.08.2016թ. դիմումով պարտավորվել է հաշվետու կիսամյակում չանցած վերապատրաստման դասընթացների ժամերն իր հաշվին անցնել հաջորդ կիսամյակում:**

Նման պայմաններում, Պալատի խորհուրդը, հաշվի առնելով **Արթուր Համբարձումյանի** դիմումը՝ գտնում է, որ Կարգի 30.[1] կետով սահմանված արտոնությունը կիրառելի է նաև փաստաբան **Արթուր Համբարձումյանի** նկատմամբ, իսկ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի և Կանոնագրքի 2.8.2 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցված սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Միաժամանակ՝ Պալատի խորհուրդը հարկ է համարում փաստաբան Արթուր Համբարձումյանի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Կարգի 30.[3]

կետի համաձայն՝ նույն <u>Կարգի 30.[1] կետով սահմանված արտոնությունից փաստաբանը կարող է օգտվել միայն մեկ անգամ:</u>

Ելնելով վերոգրյալից, Պալատի խորհուրդը՝ ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 28-րդ 1-ին մասի 1-ին կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով, Կարգի 30.[1] և 30.[3] կետերի, ինչպես նաև Որոշման պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Փաստաբան Արթուր Համբարձումյանի (արտոնագիր 931) նկատմամբ 08.08.2016թ. հարուցված թիվ 347-Ա/ԿԳ-16184 կարգապահական գործի վարույթը կարճել՝ փաստաբանի նկատմամբ Պալատի խորհրդի 18.12.2014թ. թիվ 35/8-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստման» կարգի 30.[1] կետով սահմանված արտոնությունը կիրառելու հիմքով:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Արթուր Համբարձումյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյան